ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Նարինե Ասրյան

Բանալի բառեր՝ հանրային քաղաքականություն, (վերա)բաշխիչ քաղաքականություն, կայուն զարգացում, տնտեսական աճ, սոցիալական առաջընթաց, բնապահպանական կայունություն, հասարակական կայունության ինդեքս, վերաբաշխման ուղղակի և անուղղակի գործիքներ:

Ներկայումս հասարակական զարգացման նվաճումը, ինչպես նաև արդի նշանակալի և բազմապլանային փոխակերպումների պայմաններում դրա կայունության պահպանումը դարձել է ժամանակակից պետությունների հանրային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Ըստ էության, այստեղ խոսքը պետության որակապես նոր գործառույթի՝ կայուն զարգացման պահպանմանն ուղղված գործողությունների, ձեռնարկման և իրագործման մասին է:

Իր հերթին, պետության կողմից այս նոր գործառույթի իրագործումը չի կարող արդյունավետ լինել առանց իր սոցիալական, տնտեսական և բնապահպանական շահերի հավասարակշռման: Սա, ըստ էության, համընդհանուր ռազմավարական նպատակ է, որը չի կարող կյանքի կոչվել պետության և նրա ինստիտուտների բնականոն պատմական զարգացման շրջանակներում. սա ենթադրում է, որ պետք է անցում կատարել զարգացման մեկ այլ, նոր մակարդակի՝ հենվելով պետության կողմից նախապես մշակված բարեփոխումների ռազմավարության վրա: Այդ անցումը, նախ և առաջ, պայմանավորված է կայուն զարգացման հրամայականով, որը, իր հերթին, կոչված էր ներդաշնակեցնելու բնություն-հասարակություն-պետություն փոխազդեցությունը և պահպանելու վերջինիս դինամիկ հավասարակշռությունը:

Ներկայումս տարբեր երկրների հասարակությունների ներպետական և միջազգային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները փաստում են զարգացման նոր մոդելի անցման, այն է՝ հասարակության սոցիալական համակարգը հարափոփոխ տնտեսական դինամիկային հարմարեցնելու անհրաժեշտության մասին. նման պայմաններում նոր հասարակարգի շարժիչ ուժը պետք է դառնա այնպիսի առանցքային սկզբունք, ինչպիսին է ինքնակազմակերպումը: Այս մոտեցումը թույլ կտա մի կողմից բարելավել սոցիալ-տնտեսական մշակույթը (խոսքը, մասնավորապես, վերաբերում է արտադրության և սպառման մշակույթին), իսկ մյուս կողմից՝ գրանցել հասարակական առաջընթաց [1]:

Ինչ վերաբերում է «կայուն զարգացում» գաղափարին, ապա պետք է նշել, որ այն առաջին անգամ կիրառվել է 1972 թ. ՝ Ստոկհոլմում՝ շրջակա միջավայրի հարցերով համաշխարհային առաջին համաժողովի ժամանակ: Իսկ 1992 թ. Ռիո-դե-Ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի շրջակա միջավայրի և զարգացման հարցերով համաժողովի ժամանակ այն որակվել է որպես «մարդկության գոյության որակապես նոր հայեցակարգ և գաղափարախոսություն» [2]: Երկրի գագաթնաժողովը (Earth Summit) նշում էր, որ «կայուն զարգացման հասնելու համար շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է զարգացման գործընթացի անբաժան մասը կազմի և չի կարող դիտվել որպես առանձին երևույթ» [3]:

---

* Հոդվածն ընդունվել է 08.07.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Քեռյանը:14.07.20:

Սակայն, այս նույն շրջանակների կարծիքով, «նման հայեցակարգ դեռևս գոյություն չունի. կան միայն համընդհանուր ճանաչում ունեցող և պաշտոնական քաղաքական փաստաթղթերում և որոշումներում ամրագրված գաղափարներ, որոնք արտացոլում են կայուն զարգացման էությունը» [4]: Փաստն այն է, որ կայուն զարգացման հայեցակարգն իր մեջ ամփոփում է տեսական նորմերի և արժեքների այնպիսի համակազմ, որի կյանքի կոչումը կնպաստի մարդկային քաղաքակրթության զարգացմանը:

Ներկայումս կայուն զարգացման հայեցակարգը ոչ այլ ինչ է, քան տեսական մոդել, որը չի պարունակում գործնական լուծումներ և չի ենթադրում համապատասխան գործիքաշար՝ կայուն զարգացման կանխադրույթների իրագործմանը հասնելու համար: Սա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ կայուն զարգացման հայեցակարգը՝ որպես ապագա հասարակարգի մոդել, ունի էվոլյուցիոն բնույթ [5]:

Առհասարակ, կայուն զարգացման հայեցակարգն ունի տնտեսա-տեխնոլոգիական հիմնավորում, որը կարելի է ներկայացնել, այսպես կոչված, տնտեսության փակ պարբերաշրջանի «5R» սկզբունքների համակազմի միջոցով. էներգո և նյութատարության սահմանափակում (Reduction), չվերականգնվող ռեսուրսների փոխարինում վերականգնվող ռեսուրսներով (Replacement), թափոնների վերամշակման արդյունքում անհրաժեշտ տարրերի վերականգնում (Recovery), թափոնների վերաշրջանառություն (Recycling) և արտադրանքի բազմակի օգտագործում (Reuse) [6]:

Սակայն պետք է նշել, որ կայուն զարգացման հայեցակարգը հետաքրքրություն է ներկայացնում նրանով, որ այստեղ կենտրոնացված են ոչ միայն պետության և հասարակության զարգացվածության մակարդակը բնորոշող տնտեսական ցուցանիշները, այլև հաշվի են առնված այն սոցիալական գործոնները, որոնք ազդում են հասարակական բարեկեցության և կայունության վրա:

Հարկ է նշել, որ կայուն զարգացման գաղափարը ձևավորվել, որպես հայեցակարգ կայացել և համաշխարհային հանրության կողմից ճանաչվել է աստիճանաբար. այդ հայեցակարգի շրջանակներում առանձնացվում են երեք հիմնական, սկզբունքայնորեն կարևոր բաղկացուցիչներ.

- *Տնտեսական աՃ. այս իմաստով «տնտեսական արդյունավետություն» հասկացությունը դիտարկվում է բոլորովին այլ տեսանկյունից. ինչպես հայտնի է, բնության օրինաչափությունները հաշվի առնող երկարատև տնտեսական նախագծերն առավել արդյունավետ են, քան այն նախագծերը, որոնց իրականացման ժամանակ հաշվի չեն առնվում հնարավոր բնապահպանական հետևանքները:*
- *Բնապահպանական կայունություն. բնապահպանության ոլորտում կայուն զարգացման հայեցակարգի հիմնական նպատակն է պահպանել ֆիզիկական և էկոլոգիական համակարգերի կայունությունը. վերջիններիս պահանջմունքների անտեսումը կհանգեցնի շրջակա միջավայրի դեգրադացմանը և վտանգի տակ կդնի ողջ մարդկության գոյությունը:*
- *Սոցիալական առաջընթաց. հատկանշական է, որ հենց սոցիալական հիմնախնդիրների առկայությունն է խթան հանդիսացել կայուն զարգացման հայեցակարգի ձևավորման համար: Այս իմաստով կայուն զարգացումը պետք է ուղղված լինի նվաճելու այնպիսի կարևորագույն արժեքներ, ինչպիսիք են սոցիալական և մշակութային կայունությունը, ապակառուցողական կոնֆլիկտների կանխարգելումը և այլն:*

Այս ամենը նշանակում է, որ կայուն զարգացման գաղափարը ներառում է երեք կարևորագույն ուղղություն՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական, և միայն այս եռամիասնության հաջող գործարկումը կարող է նպաստել հասարակական առաջընթացին: Ավելին՝ կայուն զարգացման հայեցակարգն ապացուցում է, որ հնարավոր է միաժամանակ ապահովել՝ տնտեսական զարգացում, և՝ սոցիալական առաջընթաց, և՝ բնապահպանական կայունություն: Այլ կերպ ասած, տնտեսական, սոցիալական,

բնապահպանական, ինստիտուցիոնալ և նորարարական-տեխնոլոգիական բաղադրիչների փոխկապվածությունը և հավասարակշռությունը՝ հանուն հասարակական բարեկեցության, հենց կայուն զարգացում է: Մեր կարծիքով, այս տեսանկյունից կարևոր են նաև պետության սոցիալականացման հետ կապված հիմնահարցի՝ սոցիալականացման ձևի, բովանդակության, իրացման միջոցների և հայեցակարգային դրույթների ուսումնասիրությունը:

Կայուն զարգացման հայեցակարգի հիմնական առաքելությունը ժամանակակից քաղաքակրթության համար վտանգ ներկայացնող բնապահպանական սպառնալիքի հաղթահարումն էր, որը գոյություն ուներ տեսաբանական հիմնավորումների տեսքով և գիտակցվում էր որպես այդպիսին նեղ մասնագիտական, գիտա-ակադեմիական և քաղաքական շրջանակներում [7]:

Հատկանշական է, որ ներկայումս գոյություն չունի «կայուն զարգացում» եզրույթի մեկ միասնական սահմանում, քանի որ վերջինս պարունակում է մի շարք հակասություններ: Այսպես՝ հատուկ բառարաններում «sustainable» ՝ կայուն, բառը բնորոշվում է որպես «գործընթացի կամ վիճակի այնպիսի նկարագիր, որը կարող է պահպանվել անորոշ երկար ժամանակ», իսկ «sustainable development» հասկացությունը նշանակում է գործող էկոհամակարգերի անընդհատ ներգործության պայմաններում մարդու կենսապայմանների բարելավում [8]:

Հիմնական հասկացութային բարդությունն այն է, որ «կայուն զարգացում» գաղափարը իր մեջ ամփոփում է երկու փոխբացառող հասկացություններ՝ «կայունություն» և «զարգացում»: Այդ նույն տեսաբանների կարծիքով, «կայուն զարգացում» ասվածը սոցիալական ուտոպիա է. զարգացումը ինքնին դինամիկ գործընթաց է և ենթադրում է կայունության և հավասարակշռության խախտում, այսինքն՝ եթե կա զարգացում, չկա կայունություն» [9]:

Ներկայումս գոյություն ունեն «կայուն զարգացում» հասկացության տասնյակ սահմանումներ, սակայն դրանցից ոչ մեկն ունակ չէ ամփոփ և համապարփակ ներկայացնելու եզրույթի ներքո ընկալվող հիմնական գաղափարը: Այսպես, օրինակ, 1987 թ. ՄԱԿ-ի բնապահպանության և զարգացման հարցերով միջազգային հանձնաժողովը, արդիականացնելով զարգացման նոր մոդելի որոնման խնդիրը, իր «Our Common Future» զեկույցում ներկայացրել է «կայուն զարգացում» հասկացության վերաբերյալ հիմնական մոտեցումները: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ զեկույցի շրջանակներում այդ եզրույթը մեկնաբանվում է որպես «զարգացման մի ձև, որը բավարարում է ժամանակակից պահանջմունքները՝ միաժամանակ վտանգի մեջ չդնելով հաջորդ սերունդների կողմից իրենց իսկ սեփական պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ ունակությունների առկայությունը» [10]:

Ըստ Բնության պահպանության համաշխարհային ռազմավարության՝ «կայուն զարգացումը զարգացման այն տեսակն է, որը հանգեցնում է մարդկանց կենսամակարդակի բարելավմանը, սակայն, դրա հետ մեկտեղ, չի սպառնում երկրագնդի բնական բազմազանությանը»[11]:

«Sustainable development» հասկացությունը մեկ այլ կերպ սահմանվում է որպես «թույլատրելի զարգացում, որը համաձայնեցված է բնության օրենքների և վիճակի հետ»[12]: Մեկ այլ բնորոշմամբ, կայուն զարգացումը սահմանվում է որպես «կառավարելի զարգացման այնպիսի մակարդակ, որը համահունչ է իր բնական հիմքին և ենթադրում է քաղաքակրթության գոյատևումը և շարունակական զարգացումը» [13]:

Ինչպես երևում է վերոնշյալ սահմանումներից, զարգացումն ընդունելի և թույլատրելի է համարվում այնքանով, որքանով այն «կառավարելի և վերահսկելի է»: Սա նշանակում է, որ զարգացման գործընթացները չեն կարող կրել հախուռն բնույթ. դրանք պետք է մշտապես վերահսկվեն և ուղղորդվեն բոլոր երեք՝ միկրո-(պետությունն իր

ինստիտուտներով), մեզո-(տարածաշրջանային կառույցներ և կազմակերպություններ) և մակրոմակարդակներում (համաշխարհային հանրություն):

Կայուն զարգացման հայեցակարգի իրացումն ապահովելու համար պետք է մշակել ցուցիչների մի ամբողջ համակազմ, որոնք կարտահայտեին հասարակության կայուն զարգացման տնտեսական, սոցիալական և բնապահպանական ասպեկտները: Այս նպատակով հոլանդացի հետազոտողներ Գ. վան դե Կերկի և Ա. Մանուելի նախաձեռնությամբ և Կայուն հասարակության հիմնադրամի աջակցությամբ 2006 թ. մշակվել է Կայուն Հասարակության ինդեքսը (համաթիվը) (The Sustainable Society Index), որը հավաքական ցուցանիշ է և ներառում է երեք առանցքային ասպեկտներ՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական. համաթիվը ցույց է տալիս աշխարհի տարբեր պետությունների և առանձին տարածաշրջանների ձեռքբերումները հասարակական զարգացման կայունության տեսանկյունից: Ավելի կոնկրետ, այն իր մեջ է ամփոփում այնպիսի բաղադրիչ, ինչպիսին է անհատական, բնապահպանական և տնտեսական բարեկեցությունը [14]:

Ընդ որում՝ վերոնշյալ բաղադրիչների միջև առկա է որոշակի օրինաչափություն. օրինակ՝ եթե հասարակության տնտեսական բարեկեցությունը պատշաճ մակարդակի վրա չէ (օրինակ՝ գրանցվել է ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալների նվազում), ապա նվազում է նաև անհատի սոցիալական բարեկեցության մակարդակը՝ ելնելով նրանից, որ թույլ զարգացած տնտեսական սեկտորը թույլ չի տալիս նրան բավարարել իր պահանջմունքները: Եվ, ընդհակառակը, անհատի բարեկեցության բարելավումը տեղի է ունենում տնտեսական սեկտորի գործունակության ավելացման հետ մեկտեղ, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է բնապահպանական բարեկեցության մակարդակի վատթարացմանը[15]:

Ինչպես ցույց է տալիս «կայուն զարգացում» հասկացության՝ մեր կողմից առանձնացված սահմանումների վերլուծությունը, դրանք կենտրոնանում են գաղափարի երեք ասպեկտների վրա «սոցիալական, տնտեսական և բնապահպանական»: Ավելին, դրանցում կայուն զարգացումը՝ որպես գաղափար, ավելի շատ դիտարկվում է սոցիալ-տնտեսական խնդիրների կառուցողական և էկոլոգիապես հավասարակշռված լուծման ապահովման տեսանկյունից, որի դեպքում հասարակության բարեկեցության մակարդակի աճը չի հանգեցնում բնական ռեսուրսների անվերադարձ սպառմանը և էկոհամակարգի վիճակի վատթարացմանը: Այսինքն՝ այդ սահմանումներում ավելի շատ գերակշռում է կայուն զարգացման գաղափարի բնապահպանական բաղկացուցիչը, այն է՝ էկոարդյունավետության և էկոարդարության ապահովումը: Մեկ նկատառում ևս. «կայուն զարգացում» հասկացության սահմանումներն, սակայն, անտեսում են մեկ, ոչ պակաս կարևոր ուղղություն՝ի դեմս քաղաքական ասպեկտը:

Քաղաքական գիտության շրջանակներում կայուն զարգացման հայեցակարգի գիտական իմաստավորումը և ճանաչումն առ այն, որ վերջինս կդառնա սոցիալ-քաղաքական գործընթացների կառավարելիությունը և վերահսկելիությունն ապահովող նոր հարացույց, ստեղծել են անհրաժեշտ նախադրյալներ՝ միջազգային, տարածաշրջանային և ազգային քաղաքական ռազմավարությունների ձևավորման համար:

Այս իմաստով պատահական չէ, որ հաշվի առնելով հատկապես փոխակերպվող հասարակությունների առջև ծառացած և պրակտիկ լուծումներ պահանջող օրակարգային խնդիրները՝ ոլորտի շատ տեսաբաններ գտնում են, որ «այսօր անհրաժեշտ է խոսել ավելի շատ ոչ թե զարգացման հարացույցի, այլ ռազմավարության մասին» [16]: Ընդ որում՝ «ռազմավարություն» ասելով՝ նրանք հասկանում են գիտական տեղեկատվության հիման վրա կառուցված գործողությունների ծրագիր, որը հաշվի է առնում զարգացման տվյալ փուլում գտնվող բոլոր հիմնական սոցիալական և քաղաքական ուժերի փոխդասավորվածությունը և շահերը: Սա նշանակում է, որ կայուն զարգացման ռազմավարությունը պետք է ընդգրկի հասարակական գործունեության ոչ միայն

սոցիալական և տնտեսական, այլ նաև քաղաքական ուղղությունը. ավելին, ըստ էության, մեր ուսումնասիրության շրջանակներում ավելի շատ անդրադառնալու ենք կայուն զարգացման հայեցակարգի քաղաքական ասպեկտին:

Եթե կայուն զարգացման հայեցակարգի քաղաքական ասպեկտը դիտարկենք որպես առանձին քաղաքական սցենար, ապա պետք է հիշենք, որ այն սոսկ քաղաքական գաղափարախոսություն չէ. այն շատ ավելին է, քանի որ կոչված է կոնսոլիդացնելու տարբեր քաղաքական գաղափարախոսություններ դավանող համաշխարհային հանրությունը և դրանով իսկ նպաստելու կայուն զարգացման գլոբալ ենթակառուցվածքի ձևավորմանը:

Ակնհայտ է, որ կայուն զարգացման հասարակության կառուցումը ենթադրում է երկարատև, հաջորդական գործընթաց: Սակայն հասարակական զարգացման ոչ մի մոդել չի կարող տալ ներկայիս իրողության բացառիկ նկարագիրը, և դա վերաբերում է նաև կայուն զարգացման մոդելին, որի մշակումն անգամ ժամանակակից առաջադեմ հայեցակարգերի առկայության պայմաններում չի կարող հաջողված համարվել՝ հասարակության օրինաչափ կապերն ու խորքային կառուցվածքների արտահայտումն ապահովող համապատասխան տեսա-գործնական գիտելիքների բացակայության պատճառով:

Հասարակական գործընթացների արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է հավասարակշռել հասարակական կյանքի տնտեսական, սոցիալական և բնապահպանական ասպեկտները, իսկ դա կարելի է անել պետական կառավարման գործիքների ներգրավմամբ. հասարակական կյանքի բոլոր ոլորտները կարգավորվում են համապատասխան քաղաքական և պետական կառույցների միջոցով, որոնք կոչված են ներկայացնելու, իրագործելու և պաշտպանելու հասարակական շահերը: Իր հերթին, պետությունը հասարակությունից ակնկալում է ակտիվ հանրային մասնակցություն, որից հետո տեղի ունեցող գործընթացների արդյունքում հասարակությունը կդառնա կայուն զարգացման հայեցակարգի արժեքները կրող օղակ:

Եթե փորձենք չհամաձայնել այն պնդման հետ, որ կայունությունն ու զարգացումն անհամատեղելի են, ապա պետք է փաստենք, որ զարգացումը կարող է կայուն լինել այնքանով, որքանով որ այն կառավարելի և վերահսկելի է: Իսկ ցանկացած պետության կայուն և շարունակական զարգացումն ապահովվում է իր իսկ կողմից իրականացվող քաղաքականության միջոցով:

Բացի այդ՝ հարկ է նշել, որ կայուն զարգացումը ենթադրում է հանրային քաղաքականության տարատեսակ ձևերի համաձայնեցում և ներդաշնակեցում կառավարման բոլոր մակարդակներում ինչպես կառուցվածքային-տարածական, այնպես էլ բովանդակային իմաստներով: Առաջադրված խնդիրը կառավարությունից, նախևառաջ, պահանջում է ձևավորել ապագայի զարգացման որոշակի տեսլական, խորհել հավանական խնդիրների և հնարավոր լուծումների մասին, ակտիվ կերպով որոնել բազմակի օգուտների հանգեցնող լուծման այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ համակարգային վերլուծության միջոցով և այլն [17]:

Ինչպես նշեցինք, կայուն զարգացման ապահովումը դարձել է պետության հանրային քաղաքականության վճռորոշ ուղղություններից մեկը, և այս իմաստով հատկապես հարկ է առանձնացնել պետության կողմից իրականացվող վերաբաշխիչ քաղաքականությունը, քանի որ, առաջին հերթին, քաղաքականության հենց այս ձևի միջոցով է ապահովվում տնտեսական առաջընթաց, սոցիալական կայունություն և հասարակական զարգացում:

Առհասարակ, վերաբաշխումը բարդ, ներքին հակասություններ ունեցող տնտեսական երևույթ է, որն արտահայտում է հասարակական արտադրության համալիր բնույթը: Սակայն բարդ տնտեսական երևույթ լինելու հետ մեկտեղ այն ունի օբյեկտիվ ծագում և իրականացվում է բաշխման գործընթացներից հետո: Ի տարբերություն բաշխ-

ման, որի հիմնական դերակատարները հանրային բարիքների և արտադրական գործոնների սեփականատերերն են, վերաբաշխման գործընթացին մասնակցում է ողջ հասարակությունը՝ բոլոր այն դերակատարները, որոնք ներգրավված են հասարակության սոցիալական, քաղաքական և տնտեսական ասպեկտներում [18]:

Քանի որ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսական դերակատարների գործողությունները սերտ փոխկապակցված են, ուստի հասարակության ներսում որևէ միավորի կենսապայմանների բարելավումը չի կարող չանդրադառնալ մյուսների վրա կամ տեղի ունենալ դրանցից անջատ: Իր հերթին, այս ամենը պահանջում է համաձայնեցված գործողությունների համակազմի առկայություն, ինչն էլ ապահովում է պետությունն իր վերաբաշխիչ քաղաքականության միջոցով:

Վերաբաշխիչ քաղաքականության վերլուծությունը հաճախ կանգ է առնում եկամուտների հոսքի ուսումնասիրության վրա, ինչը, իր հերթին, նպատակ ունի պարզելու վերաբաշխման և տնտեսական առաջընթացի միջև եղած կապը: Օրըստօրե խորացող տնտեսական անհավասարության և սոցիալական բևեռացվածության պայմաններում ի հայտ է գալիս անհրաժեշտություն՝ պարզելու տնտեսական առաջընթացի և սոցիալական կայունության փոխկախվածությունը և փոխկապակցվածությունը: Այլ կերպ ասած, դա նշանակում է, որ վերաբաշխումն ուղղակիորեն կապ ունի կայուն զարգացման հետ. որքան պետությունն ավելի արդյունավետ է իրականացնում ռեսուրսների բաշխումն ու վերաբաշխումը, այնքան նրա կողմից ավելի արագ են նվաճվում կայուն զարգացման հատկանիշները. հատկանշական է, որ վերջինիս ներքո պետք է ընկալել սոցիալական, տնտեսական և բնապահպանական ասպեկտները:

Վերաբաշխիչ քաղաքականության և սոցիալական հավասարության միջև եղած կապին վերաբերող փաստարկներն առավել հիմնավոր դարձան քաղտնտեսության՝ որպես տնտեսագիտության ուրույն ճյուղի, առաջացման հետ մեկտեղ: Ենթադրվում էր, որ շուկայական ուժերը նախ կուժեղացնեն սոցիալական անհավասարությունը, այնուհետև կմեղմեն այն՝ տնտեսական զարգացվածության որոշակի մակարդակի նվաճման միջոցով: Սա նշանակում է, որ անհավասարությունը հանդես է գալիս որպես բնական և ժամանակավոր երևույթ, և վերաբաշխիչ քաղաքականության հիմնական նպատակը այն չեզոքացնելը կամ նվազագույնի հասցնելն է:

Վերաբաշխիչ քաղաքականությունը այն ռազմավարության առանցքային բաղադրատարրն է, որի հիմնական առաքելությունն անհավասարության կրճատումն է և կայուն զարգացումը երեք ուղղություններով՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական : Ընդ որում՝ այս երեք ուղղություններից յուրաքանչյուրը ենթադրում է ուրույն գործիքակազմի առկայություն՝ եկամուտների վերաբաշխման և ոլորտների զարգացվածության մակարդակների համահարթեցման համար:

Բացի իր վերոնշյալ գործառույթներից՝ վերաբաշխիչ քաղաքականությունն արժեքավոր է նաև նրանով, որ ուղի է հարթում դեպի կայուն զարգացման ապահովում՝ ձևավորելով սոցիալ-տնտեսական այն համատեքստը և խթանները, որոնք նպաստում են պետությունների տնտեսական զարգացմանը, քաղաքական ինտեգրմանը և բնապահպանական կայունությանը [19]:

Շուկայական համակարգի գործառնումն անհնար է պատկերացնել առանց բաշխման և վերաբաշխման գործընթացների. այլ կերպ ասած, այդ գործընթացները ցանկացած տնտեսական համակարգի անբաժանելի մասն են կազմում: Պետության վերաբաշխիչ քաղաքականության իրականացման շրջանակներում բնակչության կենսամակարդակը և նրա տարբեր սոցիալական խմբերի միջև եկամուտների վերաբաշխումը հասարակական զարգացման դինամիկ համակարգի ֆունդամենտալ փոփոխականներն են. սովորաբար դրանք հարաբերականորեն կայուն են, քանի որ դանդաղ են փոփոխվում՝ այս կամ այն կերպ ազդելով հասարակության սպառողական ունակությունը-

ների, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ տնտեսության արդյունավետ գործառնման վրա [20]:

Ժամանակակից պայմաններում պետության վերաբաշխիչ քաղաքականությունը ենթադրում է հասարակության ներսում առկա բոլոր սոցիալական խմբերի համար իրական մեկնարկային հավասար հնարավորությունների ստեղծում՝ մարդկային կապիտալի զարգացման պետական ծրագրերի, փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցման, հակամենաշնորհային քաղաքականության և այլ մեխանիզմների միջոցով: Պետությունն իր վերաբաշխիչ քաղաքականությամբ որոշում է տվյալ պահին ռեսուրսների բաշխման և վերաբաշխման ռազմավարությունը և մարտավարությունը, հետևաբար՝ նաև կանխորոշում տնտեսական զարգացման հեռանկարները: Միաժամանակ վերաբաշխիչ գործընթացների բնույթը պայմանավորված է այն տնտեսական համակարգով, որտեղ նրանք ստեղծված են, և որը սպասարկում են: Օրինակ՝ վարչահրամայական տնտեսության պայմաններում պետության վերաբաշխիչ գործառույթներն առավել քան ակնառու էին. ավելին, դրանք կազմում էին տնտեսական մեխանիզմի անքակտելի մասը: Հայտնի է, որ պետության ձեռքում էին կենտրոնացած արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման տնտեսական շղթան, առանց որի անհնար էր ապահովել հասարակական բարիքների վերարտադրությունը:

Կենտրոնացված, վարչահրամայական տնտեսությունից անցումը ազատ շուկայական հարաբերությունների ենթադրում է պետության գործառույթների (հատկապես սոցիալ-տնտեսական) փոխակերպում և վերաիմաստավորում: Նման պայմաններում պետության գերխնդիրն է դառնում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների որոշումը և բնակչության բարձր կենսամակարդակի նվաճումը: Այս պարագայում հատկապես մեծ նշանակություն է ձեռք բերում պետության եկամուտների բաշխման և վերաբաշխման համակարգը՝ որպես պետության սոցիալ-տնտեսական գործառույթների ամփոփ և համապարփակ համակազմ: Ընդ որում՝ որքան ավելի զարգացած են բաշխման և վերաբաշխման ձևերը, այնքան ավելի բարդ են ներպետական տնտեսական հարաբերությունները, և որպես հետևանք՝ տնտեսության պետական կարգավորման գործիքները և մեխանիզմները:

Վերաբաշխման ձևերի մեջ հատկապես առանձնացնում են այն ձևերը, որոնք ազդում են բնակչության իրական եկամուտների ձևավորման վրա: Այդ վերաբաշխիչ գործընթացները ենթադրում են տնտեսական հարաբերությունների որակապես տարբեր խմբավորումներ՝ հարաբերություններ հասարակության առանձին անդամների, ձեռնարկությունների և ի վերջո պետության հետ: Հարաբերությունների այս մոդելներից յուրաքանչյուրը թելադրվում է ստեղծված տնտեսական իրավիճակով, գործող տնտեսական օրենքներով և պետության տնտեսական քաղաքականությամբ [21]:

Պետության կողմից իրականացվող վերաբաշխիչ քաղաքականության գործիքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Բաշխման ուղղակի գործիքները պայմանավորում է պետական բյուջեն. պետությունը, հարկերի տեսքով միջոցներ հավաքագրելով իր բյուջեով (եկամտային մաս), այն օգտագործում է սոցիալական ծրագրերի, նպաստների և այլ վճարների համար (ծախսային մաս):

Բաշխման անուղղակի գործիքները ներառում են բարեգործական հիմնադրամները, բնակչության աղքատ հատվածին արտոնյալ պայմաններով հարկումը, կրթական և առողջապահական անվճար ծառայությունների տրամադրումը, մենաշնորհային շուկաներում գների վրա պետական վերահսկողությունը և այլն: Հարկ է նշել, որ բաշխման անուղղակի գործիքների առավելությունն ուղղակի գործիքների համեմատությամբ այն է, որ օգնելով հասարակության ներսում բաշխման գործընթացն առավել արդարացի դարձնելուն՝ դրանք, միաժամանակ, բացասաբար չեն անդրադառնում շուկայական գործընթացների վրա:

Հաշվի առնելով ժամանակակից զարգացած պետությունների սոցիալական ուղղվածությունը՝ պետք է փաստել, որ տնտեսական ոլորտի զարգացումը հասարակական պահանջմունքների բավարարման հիմնական պայմանն է: Ստեղծված իրավիճակում՝ կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում, պետության գերխնդիրն է հասարակական գործընթացների զարգացման կարգավորման և դրանց վրա ներգործության պատշաճ մեթոդների և գործիքաշարի ընտրությունը, մշակումը և գործարկումը [22]:

Ազատ շուկայական մեխանիզմների կայացման անցումային փուլը ենթադրում է նաև պետության գործառույթների փոփոխում: Այս իմաստով պետք է վերաիմաստավորվի և ակտիվացվի պետության՝ որպես բաշխման և վերաբաշխման գործընթացները արդարացիության և հավասար հասանելիության սկզբունքների հիման վրա կազմակերպելու և սոցիալական փոխզիջման հասնելու ինստիտուցիոնալ ուղու դերակատարությունը: Ընդ որում՝ այս իմաստով պետության գործառույթները կարող են և պետք է սկսեն կրել սոցիալ-տնտեսական ուղղվածություն՝ ստեղծելով տնտեսա-շուկայական նոր ենթակառուցվածք և տնտեսական դերակատարների համար սահմանելով փոխհարաբերությունների նոր համակարգ [23]:

Պետության տնտեսական գործառույթների բազմազանությունը՝ մրցակցության խթանումը, հակամենաշնորհային քաղաքականությունը, սոցիալական լարվածության մեղմումը և այլն, բացահայտում է ռեսուրսների բաշխման և վերաբաշխման գործընթացների նկատմամբ վերահսկողության նրա պոտենցիալ հնարավորությունները: Անգամ ազատ շուկայի պայմաններում պետությունը կոորդինացնում և ներգործում է հասարակական արտադրության բոլոր տարրերի վրա՝ կազմակերպելով ոչ միայն բաշխման և վերաբաշխման գործընթացները, այլ նաև թուլացնելով ճգնաժամային իրավիճակների պարագայում բնակչության կենսամակարդակի վրա շուկայի ունեցած բացասական ազդեցությունը [24]:

Այսպիսով՝ պետք է որոնել պետության տնտեսական գործառույթների և շուկայական մեխանիզմի օպտիմալ հարաբերակցության ուղիներ, որոնց դեպքում պետությունը, մի կողմից, կարող է փոխհատուցել շուկայի թերությունները, իսկ մյուս կողմից՝ պահպանել միայն իրեն վերագրված գործառույթները:

Արդյունավետ կառավարման համատեքստում վերաբաշխիչ քաղաքականության իրականացման դեպքում կգրանցվի հասարակական կայունության զարգացման դրական դինամիկա: Սա նշանակում է, որ արդյունավետ հանրային քաղաքականությունը կայուն զարգացման հայեցակարգին, որքան հնարավոր է, արագ անցում կատարելու երաշխիքն է. ավելին, ներկայումս պետությունը, շնորհիվ իր ձեռքի տակ եղած կառավարման և կարգավորման անհրաժեշտ գործիքների և լծակների, կարող է դրականորեն ազդել զարգացման գործընթացների վրա:

Հանրային քաղաքականության շրջանակներում հիմնախնդիրների կարգավորումը և վերջիններիս լուծումների որակի բարելավումը, այսպիսով, առանցքային նշանակություն ունեն: Միայն կառավարության արդյունավետ աշխատանքի արձանագրման դեպքում կարող ենք խոսել ոչ թե դասակարգային, այլ համընդհանուր բարեկեցության մասին: Այդ է պատճառը, որ պետության հանրային քաղաքականության առանցքային խնդիրներից մեկն է դառնում ճիշտ կողմնորոշիչների ընտրությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Подгорный В. В., Особенности государственно-управленческой деятельности в условиях устойчивого развития общества, М., 2016, стр. 30-31.
2. Адрианова Т. В., Социально-философские аспекты формирования устойчивых обществ: научно-аналитический обзор / Т. В. Адрианова. -М., 1998, стр. 47

3. Бегун Т. В., Устойчивое развитие: определение, концепция и факторы в контексте моногородов [Текст] // Экономика, управление, финансы: материалы II Междунар. науч. конф. (г. Пермь, декабрь 2012 г.). — Пермь, 2012. — стр. 158-163
4. Акимова Т.А., Экономика устойчивого развития: Учеб. Пособие//Т.А. Акимова, Ю.Н. Мосейкин. – М., 2009, стр. 43
5. Слатенькова М. А., От экономического роста к устойчивому развитию: роль государства . – 2013. – № 4 (15), стр. 156-165
6. Слатенькова М.А., Государство и устойчивое развитие: Взаимосвязь и взаимозависимость, Харьковский национальный университет имени В. Н. Каразина (Украина)- УДК 330.117:330.342, 2014, стр. 1
7. Логунцев Е., Концепция устойчивого развития с позиций междисциплинарного подхода. // Городское управление. – 2000. - №11 – стр. 24-32.
8. Англо-русский экономический словарь. [Электронный ресурс]. Режим доступа: http://translate.academic.ru/sustainable %20development/en/ru/.
9. Картаева Е., Родина Н., Яковлев О., Управление развитием: насущные про¬блемы и возможные варианты решений // Муниципальная власть. 2003. №4. - стр. 20-24.
10. Our Common Future: Report of the World Commission on Environment & Development // World Commission on Environment and Development. Oxford Paperbacks, 1987, https://sustainabledevelopment.un.org/content/documents/5987our-common-future.pdf, p.41
11. Декларация тысячелетия/ООН, Саммит тысячелетия, Нью-Йорк, 6-8 сент. 2000 г. М.: Информационный центр ООН в Москве, 2001. стр. 5
12. Пустохина Н. Г., Валиев В. Н., Концепция Устойчивого Развития: Основные Положения, № 2(38), 2015, стр. 3
13. Колбасов О. С., Конференция ООН по окружающей среде и развитию, Государство и право. 1992. - № 11. - стр. 85-89.
14. Sustainable Society Foundation [Electronic Resource]. – Mode of access: URL http://www.ssfindex.com/
15. Слатенькова М.А., Государство и устойчивое развитие: Взаимосвязь и взаимозависимость, Харьковский национальный университет имени В. Н. Каразина (Украина)- УДК 330.117:330.342, 2014, стр. 2
16. Левашов, В. К., Социально-политическая устойчивость общества, Вестник Российской академии наук. – 2011. Т. 81, № 12. – стр. 1059-1064.
17. Brignall-Theyer M., Frame B., Landcare M.M., Sustainable Development – The Challenge For Public Policy, Documentation of the ‘Sustainable Development: Programme of Action’ (SDPoA), Research PO Box 69, Lincoln 8152 New Zealand, March 2005, p.8
18. Шагинян С.Г., Современная структура перераспределений и их формы, влияющие на реальные доходы населения, Экономический вестник Ростовского государственного университета, 2003, http://ecsocman.hse.ru/data/369/811/1219/journal1.2-5.pdf, стр. 2
19. Kohler P., Redistributive Policies for Sustainable Development: Looking at the Role of Assets and Equity, Department of Economic & Social Affairs, DESA Working Paper No. 139 st/esa/2015/dwp/139 january 2015, https://www.un.org/esa/desa/papers/2015/wp139_2015.pdf, p.3
20. Чигвинцева Е.С.,Роль перераспределительной политики в обеспечении роста общественного благосостояния (на примере Ростовской Области), стр. 2
21. Шагинян С.Г., Современная структура перераспределений и их формы, влияющие на реальные доходы населения, Экономический вестник Ростовского государственного университета, 2003, http://ecsocman.hse.ru/data/369/811/1219/journal1.2-5.pdf, стр. 7
22. Котилко В.В., Пространственная модернизация экономики // Вестник Поволжского государственного университета сервиса. Серия: Экономика. 2012. № 26., стр. 9-14.

23. Клейнер Г., Петросян Д., Беченов А., Еще раз о роли государства и государственного сектора в экономике // Вопросы экономики. 2004. N 4, стр. 25-27
24. Берова Ф.Ж., Думанова А.Х., Яхутлова М.Л., Концепция устойчивого развития и его основные принципы, 2012, стр. 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում

Նարինե Ասրյան

Ներկայումս կայուն զարգացումը՝ որպես գաղափար, հանդիսանում է համաչափ հասարակական զարգացման և սոցիալական առաջընթացի գրավականը: Հոդվածում քննարկվում են կայուն զարգացման հայեցակարգի երեք ասպեկտները՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական, դիտարկվում պետության քաղաքականությունը կայուն զարգացման հայեցակարգի հիմնական դրույթների կյանքի կոչման ուղղությամբ, ինչպես նաև բացահայտվում է պետության վերաբաշխիչ քաղաքականության դերակատարությունը կայուն զարգացման ապահովման ուղղությամբ:

РЕЗЮМЕ

Перераспределительная политика государства в контексте концепции устойчивого развития

Нарине Асрян

Ключевые слова: государственная политика, политика перераспределения, устойчивое развитие, экономический рост, социальный прогресс, экологическая устойчивость, индекс устойчивого общества, прямые и косвенные инструменты перераспределения.

В настоящее время устойчивое развитие как идея является гарантией пропорционального общественного развития и социального прогресса. В данной статье обсуждаются три аспекта концепции устойчивого развития: экономический, социальный и экологический; рассматривается политика государства по реализации основных положений концепции устойчивого развития, а также выявляется роль перераспределительной государственной политики в обеспечении устойчивого развития.

SUMMARY

Redistributive Policy of State in the Context of Sustainable Development Concept

Narine Asryan

Keywords: Public policy, redistributive policy, sustainable development, economic growth, social progress, environmental sustainability, the sustainable society index, direct and indirect tools of redistribution.

At the time sustainable development, as an idea, is the guarantee of balanced social development and social progress. This article discusses three aspects of the Sustainable Development Concept - economic, social and environmental; State policy in implementing the substantive provisions of the Sustainable Development Concept is examined, as well as redistributive policy, its role in ensuring sustainable development in particular is revealed.